ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒՄ

2016թ. մայիսի 17 **N 45 -Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ի N 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2005 թվականի նոյեմբերի 1-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական մշտական հսկողության համակարգ ստեղծելու մասին>> N 54-Ա որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<1)Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության Արագածոտնի մասնաճյուղ,

2)Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության Արագածոտնի մարզային կենտրոն,

3) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության <<Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն>> Արագածոտնի մարզային կենտրոն,

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության <<Հիդրոօդերևութաբանական և մոնիտորինգի պետական ծառայություն>> պետական ոչ

առևտրային կազմակերպության Աշտարակի, Ապարանի, Թալինի, Արագածի օդերևութաբանական կայաններ,

5) Քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայությունը,

6)Քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայությունը,

7) Քաղաքացիական պաշտպանության ինժեներական,կոմունալ-տեխնիկական ծառայությունը,

8)<<Աշտարակ կաթ>> փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

9)<<Թամարա Ֆրութ>> փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

10)<<Աշտարակյան գինիներ>> փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

11)<<Արմենիա Վայն>> փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

12)<<Հայասի Գրուպ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա>>:

Գ.ԳՅՈՌԱԼՅԱՆ